

ԽՈՒԶԱԿ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՍՍԵԱՅ

Ա. ՏԱՐԻ

ԹԻԻ

11

5 ՆՈՅԵՄԲԵՐ 1897

ՊԱՅՄԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Պուշկարիայի համար

սարեկան 10 զր.

« «

վեցամսեան 5 «

Օսար երկիրներու համար

սարեկան 12 «

« « « «

վեցամսեան 6 «

Գրութիւնները եւ չեն դարձուիր

վարչութիւն «խոսակի»

Բոստոն

Administration du «Khousag

Rousthouk

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐ

Ք Ն Ա Ր Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԿԱՍ

ՀԱՒԱՔԱՎՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա

ԳԻՆ 2 ԳՐԱՆԿ

Կը լայկանայ 216 էջերէ և կը պարունակէ մաքուր
տպագրութեամբ, հին և նոր ազգային երգեր:

Փախաբողները պէտք է գիմեն առ Մ. ԽԱՉԻԿԵԱՆ
Արեւելեան տպարան, 2րդ Ուշասթ թիւ 1104 ՎԱՌՆԱ:

ԵՐԳԱՐԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՍ

ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ի պիսս

ՓՈՔՐԻՆ ՏՂԱՅՈՑ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առաջինն է որ
լոյս կը տեսնէ հայերէն լեզուով, կը պարունակէ մանկա-
կան դուարճալի երգեր ու քանի մը ոտանաւոր առակներ
և կրնայ երախաներուն ծառայել նաեւ իւր ընթերցանու-
թեան, զիւրք սրուն պարունակութիւնը գլուեցուցիչ և
հրահանգիչ է միանգամայն անոնց համար:
Թուղթը ընաիր է, տպագրութիւնը՝ մաքուր և կազմը
վայելուչ:

ԳԻՆ 80 ՍԱՆԹԻՄ

Կեղրոն. Վառնա, Արեւելեան տպարան, 2րդ. թաղ, թիւ 1104:

ՍՈՍԿԱԼԻ ԲԱՌ ՄԸ

Ձի կայ լառ մը, չի կայ մտածում՝ մը աւելի նոսկալի
և աւելի ազտոտ, քան որքան է ողորմութիւնը: Մարդը
իր բարձրութենէն դէպի վար ձգող, դանի դէպի ամբար-
առանութիւն ու արկութիւն մ'ըող այդ նոսկալի գաղա-
փարը, այդ ազտոտ դպացումը կը պաշտօնի, կը գովուի
իրեն գեղեցիկ ու վսեմ՝ լան՝ ոչ միայն հասարակ ժողո-
վուրդէն՝ այլ և համբաւաւոր ու դարգացած մարդերէ:

Ով որ կը մտածէ թէ ողորմելիներ կան և հետեւա-
բար ողորմողներ, այդպիսին մարդկային մտքին ցածա-
գոյն աստիճանին վրայ գտնուիլը կ'ապացուցանէ. ու եթէ
կայ ասուգաղէս ողորմելի արարած մը՝ ահա այդպիսին
միայն կրնայ եղած ըլլալ ան:

Պէտք է ջնջել այդ նոսկալի բառը բառարաններէն,
և այդ ամբարառան դպացումը մարդկային սրտերէն:

Եթէ կ'ուզէք, որ դէպի ճամարտապէս բաժը քաղա-
յակութիւն մը տանող մարդկային մտքի ճանապարհին
վրայէն մեծ խոչնդոտ մը վերնայ՝ վերցուցէ՛ք անոնց
մտքերէն ողորմութեան ողորմելի գաղափարը: Սորվե-
ցուցէք անոնց, թէ մարդս չի կրնար ողորմիլ, եթէ ոչ
կը կատարէ իր պարտքը փոխարէն այն պահանջին, որ
ուրիշները ունին. կամ աւելի շտապ, կը վերադարձնէ
կողոպտուալ մաս մը՝ որ այս կամ այն կերպով ըրած էր
ուրիշներէ:

Եթէ հարուստները ինքըզինքնին ողորմած կը նկա-
տեն, և կզերները դանոնք այնպէս կը հռչակեն աստուծոյ
տաճարէն՝ մարդու մը իրենց սեղանին ժլտանքէն սուսած

ըլլայնուն համար, հասցա ուրեմն ինչու ուղորմած չեն նրկատուիր այն բիւրաւոր հարստահարուածները, այն արտադրող ձեռքերը, որոնց ելծէ քրտնաթոր աշխատութիւնները չը լինին՝ հարուստները չէ թէ չի պիտի ունենային այս ճոխ կեանքը, այս դարդարանքները, որոնք ուղղակի յարիշտակութիւններով դիզուած են, այլ պիտի անոթի ու մերկ մեռնէին իրենց պաղ ոսկիներուն մօտ. այս բանը մեզ կը դարձայնէ:

Միշտ մեծ երջանկութիւն մը կը պատճառէ հարուստներուն՝ ողորմոյի համբաւ հանելը. ասոնք մարդու բան չեն տար, երբ ողորմութեան ձեռով չուզուիր իրենցմէ. միշտ հաճոյք կ'ըղչան մարդկորէն իրենց դիմող մէկը բարոյապէս մեռցնելով: Այսպիսի ողորմաւէր եր, ամէնէն աւելի կան այն երկիրներուն մէջ, ուր տակաւին կրօնքը կամ կրօնական լարոյականը կը տիրապետէ հրգօրապէս: Ասիան մեզի ծանօթ է իր կրօնական ողորմասիրութեամբ. մենք գիտենք, թէ անոնք ինչեմն ի՞նչ մեծ գոհունակութեամբ կը լեցուին, երբ ասոնք ասոնք շուններուն առջև օթեկ հաց կը լըթեն և կամ դուռերնին դարնոյ պղքատին դիչ մը բարբառած հաց կուտան:

Այս բանը սակայն աւելի դարգացած ու նրկացած է այժմ, երկիրներուն մէջ, ուր կրօնքին քով գիտութիւնը իր լոյսերը վառած է արդէն: Ամերիկան ու Անկլիան է այս երկիրները, որոնց ողորմասէրները կ'ողորմին չէ թէ միայն իրիկունը իրենց դուռը դարնոյին, այլ ամիսներով հեռի և յեզով ու դաւանութեամբ իրենցմէ տարլ եր և զոյ թշուառներուն:

Ասոնք կը փնտռեն միշտ առիթներ իրենց կրօնասիրական ողորմասիրութիւնը փայլեցնելու համար, և մենք տեսանք որ անոնք միլիոններ խարճեցին ի նպատակ հաց արկածեալ երու. լայց այս մարդիկ, որ այդ կերպով միլիոններ կը ծախեն՝ դարձանալի է, որ չեն ուզեր նոյն իսկ քթերնուն դուռը դաւառող եւ ամենօրեայ սանջանքներով յանիրաւի տառապող՝ հարստահարուած աշխատա-

աորին իրաւացի, արդար պահանջները ճանշալ, և գործադրելով զանոնք՝ ազատել մարդկութիւնը մշտածիլ գովազդութիւններէ:

Այնք չեն ուզեր թշուառութեան ու արկածներու ազդիրը ցամքեցնել, որպէս չը որկուին զթալու ու ողորմելու հրէշային հաճոյքէն:

Մարդս աւիայն պէտք չունի լնաւ պիտութեան ու ողորմութեան, այլ պէտք ունի արդարութեան ու ճշմարտութեան, որուն ծարաւին է ան, և լուն մարդը ուրիշ կերպով չի կրնար ծառայել մարդկութեան, եթէ ոչ իւէր ճշմարտութեան անկեղծ ջանքեր բնելով անոր կորուսած իրաւունքները ձեռք լեկելու համար:

ՆՈՐ ԱՊՍԵՈՅՑ ՄԸ

«Ուղակ»ի նախորդ թիւերէն մէկուն մէջ, Հունգարացի երկրագործներու հաւաքական ու յամառ գործադուլին վրայ խօսելու առիթով, ըսած էինք, թէ «ընկերվարականութեան հոսանքը կը դառնէ հետզհետէ անանկ ընդարձակ ծաւալ մը որ է՛ն լաւատես պուրժուային անգամ մտահոգութիւն կը պատճառէ»:

Մեր այս խօսքերը անմիտ հեգնութեանը արժանացան կարգ մը ողորմելիներու որոնք մէկ օր իսկ հետաքրքրուած չեն ընկերական այրող հարցով եւ ամէն բանի դէմ պառաւական խեղճուկ պատասխան մը միայն ունին՝ զոր կը յեղեղեն թութակաբար, ամէն անգամ որ ընկերութեան մէջ տիրող անիրաւ կարգ ու սարքերուն եւ զգուելի ապականութեանց դէմ դժգոհութեան բողոքող ձայն մը հասնի իրենց ականջին:

«պարապ բան է այդ ընկերվարութիւնը, քանի մը բաղդախնդիրներու վարդապետութիւնն է այն, որուն տարածմանը աշխատիլ զեռ շտա կանուխ է »կ'ըսեն միշտ, առանց սակայն ուշն ու կանուխը համեմատելու եւ առանց սեպհական, անկեղծ ու անկախ համոզում մը ունենալու:

Ամեն անոնք որ այդ անդիր ստրված յանկերքը կը կրկնեն շարունակ, շուտով պիտի հաւկնային իրենց սրբաւատելի ինքնախաբէութիւնը եւ բացարձակ սխալը, եթէ բարեհաճէն քնչ մը հետամուտ ըլլալ դիմաւորու, թէ ինչեր կանցնին ու կը դառնան

իրենց չուրջը եւ իրենցմէ հեռուն:

Բայց ո՞վ պիտի պարապի ասանկ խենդ ու խեղառ բաներով. խեղճերը միակ եւ գերագոյն իտէալ մը ունին՝ որ է քանի մը կօլական վաստկիլ եւ պատառ Էմը հայ ուտել: Իրենց աչքին է՛ն մեծ մարդը շատ զրամ ունեցողն է եւ է՛ն արժանաւոր անձն ալ այն երիտասարդը՝ որ կերպով մը յաջողած է քանի մը ֆրանք ամսաթոշակով վաճառականի մը մօտ գրադիր ըլլալ...

Ընկերականութիւն, զարգացում, յառաջդիմութիւն, զրակաւութիւն, ասոնք ամէնը մտայածին բաներ են, որոնցմով զբաղիլը անխելքութիւն է իրենց համար:

Կը խնդան վրադ, կը ծաղրեն քեզ—միշտ բացակայութեանդ—երբ կը յայտնես նոյն իսկ սա ամենապարզ ճշմարտութիւնը թէ աշխարհիս ներկայ կազմութիւնը շատ յոռի է, ան՛անկ որ ստորկութիւնը, քսութիւնն ու զրպարտութիւնը, ինչպէս նաեւ ամեն տեսակ գձուձ վատութիւնները աղատ առպարէզ ստացած՝ եւ մարդու յաջողութեան մէկ հատիկ աղբիւր են նկատուած. մինչդեռ անդին, ճշմարիտ ուղղամտութիւնն ու անկեղծութիւնը արգիլուած են, անհատի յառաջդիմութեան ճամբան ահագին ամբարտաւով մը խաբանուած է եւ բոլոր ազնիւ ձգտումներն ու ընկերական բարձր իտէալները խորտակուած են կոշտ ուժին միջոցով:

Իրենց կաշիին ու ստամոքսին Էմիայն գերի, չուկացիական բոլոր վարդտորդութիւններով վարակուած ու լոկ նիւթական հաշիւներով կուրցած այս վարանամիտ ունայնախօսները չեն տեսներ դ՛ոնէ, թէ քանի՛ քանի՛ երիտասարդներ՝ բարոյական ու նիւթական ամեն տեսակ ջաւերով համակուած ամեն օր, պատառ մը չոր հաց ճարելու համար, դառապարտուած են ուրանալ իրենց սրտի ու մտքի բոլոր պահանջները, անգործութեան մատնել ամեն բարոյական կարողութիւն, փստիլ ու լղճորիլ եւ իրենց առոյգ հասակի ամենէն եռանդուն օրերը քանցընել անասնական աշխատանքի մը տափակ միօրինակութեան մէջ, ամենաչնչին վարձքով մը որով հազիւ կրնան չի մեռնելու չափ ապրիլ: Չեն տեսներ, թէ բազմաթիւ աշխատասէր մարդիկ ալ կան՝ որոնք ամենախոնարհ զբաղում մը գտնելու բաղձն անգամ չեն ունեցած եւ, անօթութեան ու ծայրայեղ թշուառութեան հետ դէմ առ դէմ կանգնած, յուսահատ կը թափառեն անգործ ու աննպատակ:

Չեն տեսներ վերջապէս այն բոլոր սոսկալի անխղճութիւնները, ապերասան կամայականութիւնները եւ անսիրտ կեղեքումներն ու հարստահարութիւնները որոնք ամեն օր ի գործ կը դրուին արեւակաւորող զրամի կարծանարար տիրապետութեան պատճառով, եւ վերջին ծայր անտանելի կը դարձնեն խեղճ ժողովուրդ-

դին կեանքը որ արդէն իսկ աւաղելի է դժբաղդարար:

*
*
*

Երբ մէկ կողմէն դրամատէրներու այս վարձկան ու զատարկամիտ խնկարկունները կը խորթան եւ կը զառանցեն իրենց խորունկ սգիտութեան ու կղերամիտ նախապաշարունակներուն մէջ, անդին սակայն, նորանոր զէպքեր, իրենց յաջորդական երեւումով՝ կու գան ա յայտնականելու, թէ ընկերվարական վարդա շնորհիւ զգաստացուցիչ ձայները չեն կորսուիր բաց օդ՝ ալիքներուն մէջ եւ, ընդհակառակը, արձագանք կը գտնեն աշխարհի ամէն կողմ, բան ուր զասակարգի վշտահար սրահն խորները:

Եւ այս օր իսկ ամեն իրաւունք ունինք պնդելու, թէ անժառանգ դժբաղդներու մշտաչարչար կուրծքին տակ նստուած գիտակցութեան սերմերը իրենց պտուղը տուած են արդէն եւ ժողովուրդը՝ ամեն գնով՝ իր անբռնաբարելի իրաւունքները պաշտպանելու անգուսպ ու անհղ կամքով մը զենուած է:

Իրաւունք ունինք կրկնելու, որ հարուստներու ստրկացուցիչ լուծին տակ ճնշուած, չարչարուած աշխատաւորը ալեւս չի կրնար հաւատալ, թէ Աստուած է կամեցեր որ ինքը տանջուի, զրկուի եւ իր քրտինքի արգիւնքովը, ափ մը անաշխատ ու բարբարոս մարդիկ ձրիաբար ու գարշելի ցոփութեամբ վայելեն կեանքը բոլոր հաճոյքներով:

Մեր ըսածին ճշմարտութիւնը հաստատող ապացոյցներ բարեբաղդաբար չառ կան, որոնցմէ մէկը միայն յիշել բաւական կը սեպենք առ այժմ:

Անոնք որ քիչ չառ լրագիր կը կարդան, անշուշտ իմացած պիտի ըլլան թէ մօտաւորապէս երկու ամիսէ ի վեր Լօնտայի առեւտրական ընդարձակ աշխարհը տակն ու վրայ եղած է բոլորովին: Դասակարգային ուժգին կռիւ մըն է որ կը մլուխ ա'յնքան կատաղի հաստատամտութեամբ:

Մէկ կողմը կը գտնուին բոլոր մեծահարուստ գործարանատէրները որոնք ուղածնուն չափ, եւ ուղածուն էն, իբր անասուն աշխատցնել ու չարաչար շահագործել կ'ուզեն իրենց բանուորները:

Մէկլ կողմը, այս ընչաքաղց ունեւորներուն զէմ՝ եղբայրական յուզիչ համերաշխութեամբ մը միացած են հինգ հարիւր հազար գործաւորներ որոնք, մէկ սիրտ մէկ հոգի, գործադուլ ըրած են, գիտակցաբար կը յամառին եւ կը պահանջեն որ առօրեա աշխատութեան համար 8 փամ միայն ընդունուի:

Հարուստները՝ իրենց նիւթական բիրտ ու կոպիտ ուժին կռթնած, կ'ուզեն իրենց անողոք ու անսանձ կամքին անպայման հպատակեցնել աշխատող զստակարգը, եւ իրենց անխեղճ նպատակին հասնելու համար ամեն անարգ ու ստորին միջոց օրինաւոր կը համարեն եւ կը գործադրեն անամօթ բռնութեամբ:

Բոլոր իրենց հսկայ գործարանները փակած են հիմակուրնէ որպէսզի այդ հարիւր հազարաւոր բանուորները անգործ ու անօթի մնան եւ, ուշ կամ կանուխ, ստեղծուին իրենց ոտքը իյնալ նորէն: Եր խոստովանենք որ հարուստներու այս բնորոշ միջոցը, թէ եւ լիբր ու գգուելի, շատ ազդու եւ դժուար է սակայն որուն գիմարել, հիմակու հիմայ, եթէ ոչ անկարելի՝ գոնէ շատ դժուար է: Ասոր հետ մէկտեղ, կը սիրենք յուսալ որ փայլուն յաղթանակը ազնիւ ու սիրելի գործաւորներուն կողմը պիտի մընայ, քանի որ ամէն երկրի մէջ գոնուող աշխատաւորները՝ առանց ազդի ու ցեղի խտրութեան, տեղեկական պաշտելի եղբայրութեան մը ոգւով խանդավառուած, կ'աշխատեն գրաստական շուտափոյթ օգնութեան հասցնել իրենց անզգիացի բնկերներուն որոնք ամեն զոհողութեամբ եւ անձնուրաց ջանքերով անհաւասար եւ անհաւատարի կռիւ մը կը մղեն այսպէս եւ իրենց բաղձալի յաջողութեամբ հաստատած պիտի ըլլան, թէ ժողովուրդին կամքը հզօր է ամեն բանէ՝ որուն պէտք է հնազանդի ամեն բիրտ ուժ:

Ինչ որ ալ ըլլայ այս կռիւին ելքը, 500,000 հոգիներու այս նշանակելի շարժումը նոր ապայոյց մըն է, թէ բնկերվարականութիւնը բաղդախնդիրներու երեւակայական գործը չէ, այլ՝ բուն իսկ ժողովուրդի գոյութեան եւ անտեսական փեճակի բարւոքման գիտական, անժխաւի հարցն է որ պիտի լուծուի վերջապէս եւ որով պիտի ջնջուի այն սոսկալի գերութիւնը որուն լուծին ներքեւ կը հեծէ տակաւին բանւոր դատակարգը, խոշտանդիչ դաւերու եւ անհանդուրժելի տանջանքներու մատնուած:

ՎԱՀԱՆ ՇԱՀՐԻՄԱՆ

ԱՄԵՆԱՍՐԴԱՐ ԵՒ ԱՄԵՆԱԽԵՂՃ ՊԱՀԱՆՁ ՄԸ

Եւրոպական թերթերը կ'իմացնեն որ, Անկլիոյ մայրաքաղաքին մէջ մեքենագործ գործաւորները գործադուլ ըրած են, եւ կը պահանջեն, որ աշխատութեան ժամը 8 ի լընայ: Վարպետներն ու գործարանատէրերը, որպէսզի ապագային մէջ նորանոր եւ աւելի

մեծ պահանջներու առջեւ առած ըլլան՝ որոշեր են իրենց բոլոր ուժովը անոնց հետ պատերազմիլ. ուստի գոցած են գործարանները ու չափաի բանան, մինչեւ որ գործադուլ ընող գործաւորները չի գան, ու չի խոտարհին վերստին նոյն անիրաւ ու հրէշային պայմաններով գործելու:

Այս խնդիրը Բերոպայի ու Ամերիկայի մէջ բաւական յուզուեցաւ. գործադուլներ, կռիւներ եղան, բայց միշտ յաղթական դուրս եկան տէրերը:

Օրական 8 ժամ աշխատանքի պահանջը, այնքան թիթեւ պահանջ մէ, արտադրող գործաւորին ունեցած արդար ու ճշմարիտ իրաւունքներուն քով՝ որ տեղի տալու համար անոր՝ վայրկեան մը իսկ մտածելու պէտք չկայ. բայց քրիստոնեայ եւրոպական կառավարութիւնները՝ իրենց երդուեալ գաղաւորներովը, ինքը զինքնին երկրին շահուն նուիրող եւ իբր թէ այդ նպատակաւ միլիոններ ու արիւններ թափել տուող քաղաքագէտներովը, ժողովուրդները հովուելու, զանոնք դէպի յաւիտենական երջանկութիւն տանելու ծառայող, ու իբր թէ այդ նպատակաւ, կորսուած հոգիներ փրկելու համար, մինչեւ Ափրիկէի խորերը, Հոթենթաացւոյ երկիրը առաքելութիւններ ուղարկող եպիսկոպոսներովը ու միսիոնարներովը բան մը չըրաւ, եւ չ'ուզեց ընել, գործաւորներուն այս ամենատրդար եւ ամենաթեթեւ պահանջը գործադրելու համար:

Այսպիսի մարդիկ ուրեմն՝ քաղաքագէտ, իշխան, դատաւոր, եպիսկոպոս ու միսիոնար խաբեւաններ միայն կրնան ըլլալ — ասիկայ պէտք է քաջ հասկնայ ամեն անժառանգ —, երբ այսպէս ոչ միայն անտարբեր կը կենան գործարանատէրերու դէմ գործաւորին արած այս ամենատրդար պահանջի առջեւ, այլ ի հաշիւ գործարանատէրերու կը կուռին:

Արդ, երբ այսպէս ամենաթեթեւ պահանջի մը առջեւ տեղի չեն տար ժառանգաւորները եւ կը կուռին անխղճօրէն, ալ ինչպէս ուրեմն կրնանք յուսալ, որ անոնք անուշութեամբ պիտի ճանչնան անժառանգներու ամբողջ իրաւունքները, եւ տեղի տան անոնց:

Օրական 8 ժամ աշխատանքի համար ցարդ եղած բոլոր փորձերուն հետեւանքներէն ու արդիւնքներէն զիւրին է համոզուիլ, որ անժառանգները՝ տէր գառնալու համար իրենց անժխտելի եւ ճշմարիտ իրաւունքներուն՝ կռիւ, յեղափոխութիւն պէտք է, եւ կռուի համար ալ ուժ պէտք է: Ժառանգաւոր դասակարգը կազմա կերպուած բանակներ ունի անժառանգներու դէմ: Կառավարութիւնը իր բանտերը, սրեր ու թնթանօթները, հարուստները իրենց ոսկիները, կղերը իր սուտերը, եւ որ ամենէն մեծն է, եւ

ամենուն մայրը՝ մեր տգիտութիւնը: Իսկ դ՛ուք, անժառանգներ, դուք տակաւին ի՞նչ ունիք. ձեր ո՞ր ղէնքին ապաւինածէք՝ ժառանգաւորներու այս աստիճան մեծ ու հզօր բանակներուն առջեւ յաղթող հանդիսանալու համար: Դուք դեռ չառ քիչ ունիք ձեզի պէտք եղածէն. եւ այս սոսկալի ուժերը յաղթահարելու համար ձեզի անհրաժեշտ եղածը ուրիշ բան չէ, բաց եթէ աւանդական, կրօնական նախապաշարումներ է զերծ՝ մտքի մաքուր ու անարատ լոյսը, իբր ընկերական էակ՝ ձեր արդար իրաւունքներուն ու ճշմարիտ պարտույց գիտակցութիւնը. ու եթէ մէկ անգամ այդ լոյսը, այդ գիտակցութիւնը ընդհանուր ըլլայ ձեր մէջ, ահա այն ատեն պիտի տեսնէք, որ ձեր թշնամիին թնթանութները ալեւս կրակ չեն առներ, եւ փոխանակ ձեզի՝ դարձեր են իրենց դէմ. այն ատեն ահա թշնամիին ոսկիները ալ չպիտի կրնան չլացնել ձեռնէ մէկ մասը ձեզի դէմ հանելու ու ձեր ձեռքովը ձեզ խորտակելու համար. եւ վերջապէս ահա այն ատեն է որ, կղերը զձեզ ալ չի պիտի կրնայ խաբել իր չհաւատացած սուտերը ձեզ կլնեցնել տալով, ու վարպետութեամբ վերայական բաներով միաքերնիկ ըզբազեցնելով՝ զանի հեռու պահելու ձեր տխուր վիճակը եւ յափշտակուած իրաւունքները խորհրդածութեան տոարկայ ընելէ:

Հասնելու համար սակայն այս բաներուն պէտք ունիք մաւառ որ սնունդի. եւ այդ ձեզ պիտի մատկարարէ միայն ընկերվարական գրուածքները, որոնց դժբաղդաբար կարեւորութիւնը լաւ չէ հասկցուած անժառանգներէն: Խ.

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՌԻՍՈՒՍ ՆԱՍԻՐԵԼՈՒ ՍԵԹՈՏԸ

ՆԵՐԱՄՈՒԹԻՒՆ

Իրականին գիտութիւնը այսպէս յիմարարգել վանդակապատ կը ծառայէ արկածախնդիր միաքին դէմ, եւ չառ ուրիշ արժանիքներ ունի: Կը յայտնէ մարդուն իր դիրքը էակներու կարգին մէջ եւ անոր ընդնշմարել կուտայ իր դերը տիեզերքին մէջ. անոր կուտայ արժանապատուութեան եւ համեստութեան դասեր, որովհետեւ անոր կը ցուցնէ թէ ի՞նչպէս բարձրացած է անասնութենէն մարդկութեան. ի՞նչպէս նաեւ դիւրին կերպով կրնայ իջնել նորէն նախնական անասնութեան: Անոր կը սորվեցնէ թէ ի՞նչ ուղղութեամբ քալած է խաւարին դարերէ հեռէ ուր դեռ վայրենի էր եւ այսպէս, աստիճան մը, զայն կը նախապատրաստէ շա-

րունակելու սկսած երկար ուղին: Նոյն իսկ աղով, կը հաստատէ յառաջգիմութեան բաղձանքը, լաւագոյն վիճակին տենչը, իսկոտ գարաւոր աւանդութեամբ մը:

Եւ սակայն, իրականութեան այս գիտութեան յարգանք ընծայելով մէկտեղ, կը համարձակիմ ըսել որ նոյնպէս նա չպիտի կրնար բաւել ուղղելու անոնց գործունէութիւնը, որոնք կը հարցնեն իրենք իրենց. Ո՞ւր կ'երթանք եւ ի՞նչ պէտքէ ընել:

Կ'անցնիմ պակաս բաներուն վրայէն՝ զորս կը ներկայացնէ, հակասութիւններուն վրայէն ուր կը տապալակի: Ինձ չափ լաւ գիտէք այն բուռն վիճաբանութիւնները զորս կը յարուցանէ դեռ հիմայ պատմութեան մեկնութիւնը: Գիտէք այն հակառակ տեսականութիւնները, որոնց վէճի նիւթ է մարդուն փիլիսոփայական իմացումը: Չեմ ուզեր զինուել, ինչպէս իրաւունք պիտի ունենայի այդ ընելու, այս թերութիւններով որոնք թերեւս անբաժան են ա մէն մարդկային գիտութենէ եւ կրնան մի առ մի ուղղուիլ տարիներու ընթացքին մէջ: Կ'ենթադրեմ մարդուն եւ մարդկային ընկերութիւններուն ներկային եւ անցեալին գիտութիւնը վերջացած ու կատարեալ: Կ'ըսեմ որ նոյն իսկ այն աստե՛ն նա առանձին չպիտի կրնար տալ ընկերական խնդիրին լուծումը:

Արդարեւ, քննական մեթոտը՝ որ ա մէն թանձրացեալ գիտութեան մեթոտն է, կը հոգայ միայն իրողութիւններ, եւ նորէն իրողութիւններ, եւ միշտ իրողութիւններ: Ինչ որ կ'անուանեն գիտական լեզուով օրէնք մը ուրիշ բան չէ բայց եթէ ընդհանուր իրողութեան մը հաստատումը. ասիկայ կը նշանակէ նորէն այն թէ ապփոխ ծանօթ պարագաներու մէջ իրերը պիտի պատահին այս կամ այն կերպով: Այն՝ որ կ'ուզէ իրապաշտական գիտութեամբը գոհանալ, կրնայ միայն հաստատել սքանչելի անտարբերութեամբ մը ամէն ինչ որ կը ներկայանայ աչքերուն. անմիջապէս որ միտքէն անցնէ գտնել, անմիջապէս որ հասկցնէ թէ բան մը լաւ է կամ գէշ, կը մտցնէ նոր տարր մը, անձնական, եւթական, միտքէն փոխ առնուած տարր մը, պաղափար մը: Ն'ա, գիտնայ կամ ոչ, բաղդատեց գնահատած բանը իր մէջ նախագոյ իսէալի մը հետ: Եւ ստուգիլ ի՞նչ իմաստ պիտի ունենային յառաջգիմութիւն եւ անկում բառերը, եթէ զանոնք գործածողը չըմբռնէր, առաւել կամ նուազ մեկին կերպով մը, ընկերական վիճակի տիպար մը, որուն կը մօտենայ կամ ուրկէ կը հեռանայ իրմէն նկատի առնուած իրական ընկերութիւնը:

Այսպէս արդէն ներկային եւ անցեալին քննադատութիւնը կը պահանջէ տիրաբար իրեն նուիրուողին մէջ իսէալի մը գոյութիւնը: Այս հարկաւորութիւնը ա՛լ աւելի ակներեւ դուրս կուգայ եթէ

կարելի է, անմիջապէս որ խնդրեր ապագան կանխելու եւ պատրաստելու վրայ է: Հոս լաւագոյնին զազախարր կը դառնայ գործողութեան անհրաժեշտ սկզբունք մը: Ի զուր պիտի ուզէին գիտնալ անմիջապէս ճշգրտութեամբ մը թէ ո՛ւր կը ձգտի եւ ո՛ւր պիտի յանգի արդի ընկերութիւնը. Ի զուր պիտի ըսէին թէ վաղը պարփակուած է այսօրին մէջ ինչպէս տունկը սերմին մէջ եւ թէ հետեւաբար վաղը պիտի իրականանայ ինքնիշխան: Պիտի պատասխանէի որ այս տեսականութիւնը մոլոր է ասով որ կը մոռնայ իր հաշիւներուն մէջ էական տարր մը, ընկերութեան նոյն իսկ անդամներուն հետզհետէ գիտակից կամքը: Պիտի պատասխանէի որ այս կամքը կ'ընայ գո՛նէ լամբացնել կամ երազել ամբողջութեան, որուն մասը կը կազմէ ինք, շարժումը, եւ մի կամ միւս կողմ գործելէ ատա՞յ բնական է որ ինք իրեն պիտի հարցնէ թէ ամբողջութեան հետեւած ուղղութիւնը լաւ է թէ գէշ: Պիտի պատասխանէի որ, եթէ պատմական կամ գործարանական ճակատագրականութեան այս վարդապետութիւնը ուղիղ ըլլար, պիտի մնար միայն ծալլել թեւերը եւ գիտել անայլայլ հասկերպութեամբ մը կեանքին մշտանոս գետին հոսումը: Բացարձակ անշարժութիւնը պիտի ըլլար իմաստութեան վերջին բառը:

Բայց նոյն իսկ այս կարծեք զաւանդները, խորր քննելով, այնչափ լաւ համոզուած են թէ « բազմին օրէնքը », ինչպէս կ'ըսէ Գորնէյլ:

Միշտ չի գրուած անգամ քանկերուն մէջ, այնքան լաւ կ'ընդունին՝ գործնականին մէջ այն կաբողութիւնը գործարար ունի փոփոխելու ընկերական միջավայրը որուն մէջ կը բնաչրջի, որ կը յոգնին իրենց վարդապետութիւններուն համար կռուելու, այս կամ այն տնօրինութիւն գովաբանելու, այս կամ այն կերպ գործելուն ընդդիմանալու: Արդ, այն վայրկեանէն որ կ'ուզեն մի կամ միւս կողմը միտել մարդիկ կամ իրերը, միթէ նախընկալ դադարփարի մը դօրութեամբ չ'է: Երբ կը պահանջեն բարենորոգում մը, որքան ալ փոքրիկ կարենայ ըլլալ այն, չ'է որ որովհետեւ կը տեսնեն կամ կը կարծեն տեսնել մետքին աչքերով բան մ'որ կ'երեւի գոյութիւն ունեցող իրականութիւնէն լաւագոյն:

Բոլոր ասկէ կ'եղբակացնեմ որ կային կամ եղածին ուսումնասիրութիւնը, նոյն իսկ եթէ մեզ ասց ընկերութեան մը հաւանալան ուղղութեանը վրայ լոյսեր, չկրնար բաւել մեր գործողութիւնը ուղղելու, պէտք է անոր աւելցնել ըլլալիքին ուսումնասիրութիւնը: Ուրիշ բառերով, քանի որ ընկերութեան բ՛աշրջումին օգնել ուղղող (որքան ալ քիչ ըլլայ այս օգնութիւնը) ամէն մարդ ունի իր մէջ ինչ որ իտէալ կ'անուանեն, պէտք է չուկէ-

տը մեզ առող իրականութենէն վերջը նկատել եւ ուսումնասիրել այն իտէալը որ միայն կրնայ մեզ ցուցնել, եթէ ոչ վերջնական հասկէտը, գոնէ այն ուղղութիւնը ուր յարմար է փնտռել զայն:

Բ.

Հանչցայ այն ժամանակը, պարոններ, եւ նա շատ հեռի չէ, ուր իտէալի ամէն ակնարկութիւն՝ անվերջ բարկութիւն եւ ծաղր յարուցանելու ձիրքը ունէր: Ոմանք նոյն իսկ կ'արտասանէին իճեխալ աւելի լաւ անոր ցոյց տալու համար իրենց արձամարձանքը: Քանզի զայն կ'երեւակայէին (եւ իտէապաշտութեան կարգ մը ծրագիրներ ուժ կուտային այս սխալին) իբրեւ չեմ գիտեր ի'նչ տարօրինակ, խորհրդաւոր, նոյն իսկ գերբնական բան, իյնալով երկինքէն օդաքարի մը պէս կամ ծնելով պատահարաւ ցնորած երեւակայութենէ մը: Պէ՞տք է ինձ ըսել ձեզ որ այն իտէալը՝ որուն վրայ կը խօսիմ, բնաւ չունի այդ նկարագիրը:

Նախ, պարզապէս մարդկային է նա եւ սերտ կերպով կապուած իրականութեան հետ, ինչպէս ծաղիկը զինք մտւոյանով հոգին հետ: Պնած է նոյն իսկ այս իրականութենէն: Մի իմացումն է կեանքին եւ աշխարհին որոնց ծագումները զանազան են, մերթ կ'երեւի իբրեւ մի բնազդ, իբրեւ մի ժառանգական ուժ ուր կը վերածնին մեր հայրերուն բաղձանքները եւ որուն արմատները կը գտնուին այսպէս մեր գոյութեան ամէնէն խորը, մերթ կը ներկայացնէ չափ մը ծանօթութիւններ որոնք կուզան դարերուն խորէն, աւանդուելով սերունդէ սերունդ եւ խառնուելով ուղեղին մէջ ամենատալայ հասակէն. շատ մը մարդերու մէջ, նա կը կազմուի եւ կը փոփոխուի օր օրին, յաճախ թելադրանքով եւ հետեւողութեամբ, յաճախ հակադրելով դուրսի ազդեցութիւններուն գէմ, որոնք կը վիրաւորեն մեր իմացականութիւնը եւ մեր զգացողութիւնը: Ինչ որ ալ ըլլայ ասով մէկ տեղ իտէալը կազմող գաղափարներու ծագումը, թէ այն կազմուած ըլլայ ցեղէն, խառնուածքէն, գաստիարակութենէն, փորձառութենէն կամ անձնական խորհրդածութենէն, գիտութենէն կամ պատմութենէն, քիչ կարեւորութիւն ունի, զայն կազմող բոլոր աարբերք փոխ առնուած են իրականութենէն որ մեզ կը պատէ եւ կը պարունակէ: Եւ, եթէ կը մեկնի իրականութենէն, կարելի է ըսել նաեւ որ հոն կը յանդի, որովհետեւ կը դառնայ ոչ միայն դատելու կանոն մը, այլ ընթացքի կանոն մը: Այսպէս կը ձգտի իրողութեան փոխ ուելու, իրանալու, ինչպէս կ'ըսեն, եւ այս կերպով կայ իտէալ

ստեղծող իրականութեանը եւ իրականութիւնն ստեղծող իտէալին մէջ անզ երթեւեկ շարժում մը, որ անգագար կը վերսկսի:

Ունի՞ բացարձակ արժէք մը, այս իտէալը: Անշուշտ ոչ, քանի որ մարդկային է: Ի՞նչ զանազանի բարձրութեամբ եւ բնութեամբ, նայելով անձերուն, ժամանակներուն, երկիրներուն: Որքան ալ բարձր ըլլայ կամ ուզէ ըլլալ, հաւատարմօրէն կը ցոյացնէ մեր ծանօթութիւններուն եւ մեր բարոյականութեան անկատարութիւնը: Թէ եւ անցնի ինչ որ գոյութիւն ունի, ասոր կապուած է ոչ միայն իր արմատներով, այլ իր հնարաւոր սխալներով, իր կարգ մը թերութիւններով: Այս կը նշանակէ՞ սակայն թէ անօգուտ է նա այս պատճառով, անկարող՝ արգի ընկերութիւնը լաւագոյն ընելու: Ոչ ստուգիւ: Նախ կը բարձրանայ արգէն այդ ընկերութեանէն շատ վեր եւ կը պահանջէ իրեն հասնելու համար մէկ կամ շատ իջեւաններ: Եւ ապա, եթէ միայն ժամանակաւոր հասկէտ մ'է նա, ո՞վ պիտի արգիլէ ապագայ սերունդները աւելի հեռուն երթալէ: Անոնք պիտի ըլլան ազատ, աւելի լաւ խօսինք, անոնք պիտի ստիպուին իրենց կարգին յղանալու ուրիշ իտէալ մը որ՝ նուազ անկատար իրականութենէ մը ծնելով, պիտի ըլլայ հետեւաբար աւելի գեղեցիկ, աւելի մեծ, աւելի վեհ, աւելի լուսաւոր: — Նայ, Պարոններ, իտէալի բնաշրջում մը, իրականութեան բնաշրջումին զուգահեռական եւ յարնչական: — Իտէալը, որչափ իրականանայ, կը բարեփոխուի, կ'ուղղուի, կը կատարելագործուի, եւ կը ներկայացնէ այս նշանաւոր հանգամանքը որ կը յառաջանայ եւ կը բարձրանայ միշտ իրեն մօտեցողներուն աչքերուն առջեւէն: Վշտառի՛թ հեռատեսիլ, պիտի ըսեն ծանծաղ միտքերը: — Եզականօրէն խրախուսի՛չ հեռատեսիլ, պիտի ըսեմ ես ընդհակառակը: Պէտք է սր ապագան սւնեհայ, ինչպէս մենք, իր ընելիք գործը, եւ խիստ դժբաղդ պիտի ըլլային մեր յաջորդները երկրիս վրայ, եթէ ա՛լ չունենային, ապրելու իրենց օգնելու համար, փափաքին խթանը, ջանքին առնական ուրախութիւնը, անսահման յառաջդիմութեան յոյսը եւ հետապնդումը:

Շարունակելի

Հայ թերթի մը մէջ «վառօդ» ծածկա ունով Սիլիս-
տրէէն գրուած համակ մը կարգացինք, որով համակա-
գիրը ստայօդ ամլաստանութիւններ կ'ընէ տեղիս հա-
խորդ գառատուն վրայ, իւր թէ այս վերջինը մօտ 660
Ֆրանք շորթած լինէր «Հայ երիտասարդների միութեան»
ընթերցարանի հաւոյթէն և գրքերը կոչողաւ:

Ներկայիւս պաշտօնապէս կու գամք յայտարարել որ,
վերոյիշեալ անձնուէր և մեր միութեան հիմնադիր գա-
ստուն, մէկ սանթիմ խորել չգիտնալէ դատ՝ ամէն զոհո-
ղութիւն ըրած և տեղիս Հայ երիտասարդութեան լար յ-
ական և մտաւորական դարգացումին դարկ և իայլ տալ
միայն մտածած է:

Մօտիկ անցեալի մէջ տեղս կերուած ստակ մը եղած
է, այդ ալ Ադգ. Ընկերութեան մը 60 Ֆրանսական ոսկին
է, զոր իւրացուցած է Ակալի Ընսանիքէն Յակօր անուն
մէկը:

Կը յուսանք որ յանուն անկողմնակալ լթեան պիտի
հաճիք անկիւն մը շնորհել Ձեր թերթին մէջ՝ բուժե-
լու համար գայթակղած միտքերը և իրկելու համար
մեր նախորդ գաստուն և Ընկերութեան վարկը ու
պատիւը զոր ցած անձեր մընէ կը ճգնին անխղճօրէն

Ի գիմայ Տնօրէն Ժողովի

« Հայ երիտասարդների միութեան »

Վ. ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

Յ. Սիմօնեան

Ա. Մ. Ստեփանեան

Սիլիստրէ 10 22 Հոկտեմբեր 1897

Կը խնդրուի թերթէ ընդունողներէ : ր հաճին իրենց
լածնէսները ուղարկելու :

Թերթիս ձեւը փոխելով, առաջին ու վերջին երկու
երեսները ծանուցումներու յատկացուցած ենք և կ'ըն-
դունինք ծանուցումներ իւրաքանչիւր պարզ գիրի հա-
մար 1, իսկ զարդագիրի համար 2 սանդիմ՝ առանձալով

ԽՈՒԶԱԿԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ՅԱՆՁՆ ԿԱՌՆԷ ՏՊԱԳՐԵԼ

Հայերէն Պուշկարեհն եւ Ֆրանսերէն լեզուներով

ԱՅՅԵՏՈՐՄԱՆ, ՀՐԱԿԻՐԱՏՈՐՄԱՆ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԹՂԹԵՐ, ԵՒ ԱՅԼՆ

ԿԸ ՏՊԱԳՐԷՆ ԿԱՌՆԻ ՉԱՓԱԻՈՐ ԳՆԵՐՈՎ

ԳՐԲԵՐ ՈՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՂՈՒՆԵՐ

Отговорень-Редакторъ Д. Коларовъ.

Руссе, скоро-печатница на Ст. Ис. Роллево